ԼՐԱՏՈՒ

Թիվ 5 | Հունիս 2024 թ.

Միաժամանակ SMARTI-ի ծրագրի հասարակայնության հարցերով պատասխանատուները Էդուարդո Կարդոսոյի հետ քննարկեցին մի քանի կարևոր հարցեր, որոնք առնչվում էին Իրազեկման և Կայունության պլանների մշակված գործողությունների առաջընթացին:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

SMARTI ծրագրի կառավարման խորհրդի ամենամյա հանդիպում

2024 թ. մայիսի 5-ին Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաքում տեղի ունեցավ SMARTI ծրագրի կառավարման խորհրդի հանդիպումը, որի ընթացքում ծրագրի համակարգող Ջերարդ Քալենը ներկայացրեց ծրագրի իրականացման ընթացքը, արդյունքները և հետագա գործողությունները: Մասնավորապես քննարկվեցին **Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց** (ԱԴՄ) մանկավարժական ձեռնարկի մշակման և հրապարակման, արտաքին գնահատողների դիտարկումների, հայաստանյան գործընկեր համալսարանների՝ ԱԴՄ կենտրոններում անցկացված պիլոտային դասընթացների և այդ կենտրոնների հավատարմագրման մասին՝ իրականացված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» (ՈԱԱԿ) համակարգմամբ:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱՋՄԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Ծրագիրը ֆինանսավորել է Եվրոպական հանձնաժողովը: Սույն լրատուն արտացոլում է միայն հեղինակ(ներ)ի տեսակետները, և հանձնաժողովը պատասխանատու չէ դրանում տեղ գտած տեղեկության օգտագործման համար:

SMARTI Armenia SMARTI PAARA SMARTI SMARTI

Վերապատրաստման դասընթաց՝ Ռիգայի տեխնիկական համալսարանում

Մայիսի 7-10-ը Ռիգայի տեխնիկական համալսարանում տեղի ունեցավ fառօրյա ուսուցում SMARTI ծրագրի շրջանակներում: Միջոցառմանը մասնակցում էին ԵՄ ու Հայաստանի բուհերի և ՈԱԱԿ-ի 28 ներկայացուցիչներ:

Աշխատաժողովը հագեցած էր վարպետության դասերով՝ նվիրված համալսարանների միջազգայնացմանը, Եվրոպական կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգի ներդրմանը, ԱԴՄ ուսումնական ծրագրերի մշակմանը, հումանիտար թվային գիտություններում ԱԴՄ մեթոդաբանության մշակման տեսական և գործնական մոտեցումներին: Դասախոսություններով հանդես եկան տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ Քարլիս Վալտինսը, Ինես Կոկոտեն, Իգորս Տիպանսը, Գյունդարս Ալfսնիսը, Մարինա Սերպինսկան:

ՌՏՀ-ում ԱԴՄ ուսուցմանը նպաստող միջավայրին ծանոթանալու նպատակով միջազգային նախագծերի համակարգող Էլմա Էյգենիան կազմակերպեց շրջայց՝ բուհի տարբեր մասնաշենքե-րում գործող լաբորատորիաներով, որոնք հագեցած էին արդիա-կան սարքավորումներով: Հյուրերի համար կազմակերպվեց նաև Ռիգայի հին քաղաքում մշակութային շրջագայություն:

SMARTI ծրագրի հանրահռչակում՝ ռեկտորների խորհրդի նիստին

2024 թ. փետրվարի 23-ին տեղի ունեցավ բուհերի ռեկտորների խորհրդի նիստ, որին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի (ՀՀ ՊԿԱ) ռեկտոր Խաչատուր Ղազեյանը ներկայացրեց SMARTI ծրագիրը՝ ներկաներին ծանոթացնելով ծրագրի գործընկերներին, հիմնական նպատակները և ակնկալվող արդյունքները: Ընդգծելով համալսարանների համար միջազգայնացման և շարժունության նշանակությունը՝ պարոն Ղազեյանը հորդորեց գործընկերներին կիսվել իրենց միջազգային նախագծերի արդյունքներով՝ նկատի ունենալով տարածման առանցքային դերը առավելագույն ազդե-ցության հասնելու գործում: Ռեկտորը շահագրգիռ բոլոր կողմերին հրավիրեց մասնակցելու SMARTI ծրագրի շրջանակում անցկացվող վերապատրաստման դասընթացներին՝ լեզվի իմացության և ակադե-միական գերազանցության զարգացման գործում խթանելով ավելի լայն մասնակցությունն ու համագործակցությունը:

SMARTI ծրագրի հանրահռչակում՝ «Կրթություն և կարիերա» ցուցահանդեսին

2024 թ. ապրիլի 10-12-ը Կ. Դեմիրճյանի անվան մարզահա-մերգային համալիրում ՀՀ ՊԿԱ-ն մասնակցեց «Կրթություն և կարիերա» ամենամյա միջազգային մասնագիտացված ցուցա-հանդեսին, որն անցկացրին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունն ու LOGOS EXPO Center ցուցահանդեսային ընկերությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Միջոցառմանը մասնակցում էին չորս երկրների ավելի քան կրթական 120 հաստատությունների ներկայացու-ցիչներ:

ՀՀ ՊԿԱ-ի տաղավարը տպավորիչ ձևավորում ուներ և տրամադրում էր անհրաժեշտ տեղեկություն բուհ ընդունելու-թյան, ծրագրերի, լրացուցիչ կրթության, ուսանողական կյանքի և գեղչերի մասին: Որպես SMARTI ծրագրի հայաստանյան համակարգող՝ ակադեմիան ցուցահանդեսին ծրագիրը ներկա-յացրեց բաններներով, թռուցիկներով և շապիկներով՝ գրավելով երիտասարդ ներկաների ուշադրությունը:

Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների անցկացրած COIL հանդիպումը

2024 թ. մայիսի 29-ին Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ուսանողներն անցկացրին «Համագործակցային առցանց միջազգային ուսուցման» (COIL) դասընթացը՝ «Ուսանողից մինչև ձեռնարկատեր. անհրաժեշտ հմտություններ և գործարարական ու շուկայավարական նախագծի ստեղծման խորհուրդներ» թեմայով:

Հանդիպմանը Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի, Հայաստանի և Ուզբեկստանի ուսանողները հավաքվել էին՝ ուսումնասիրելու ուսանողից մինչև ձեռնարկատեր ձգվող ճանապարհը: Բավական հագեցած դասերին մասնակիցները, չնայած գործարարության մեջ լայնածավալ գիտելիքներ և հմտություններ չունենալուն, պատրաստակամ ներգրավվում էին ձեռնարկատիրական ռազմավարական նախագծման աշխատանքներին:

Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ուսանողները, որոնց առաջին փորձն էր նման ձևաչափով դասընթաց անցկացնելու, նպատակ ունեին՝

ներկայացնելու ձեռնարկատիրական հմտությունների զարգացման նոր մոտեցումները՝ ցույց տալով, թե ինչպես կարող են բիզնեսի ոլորտում չուսումնառող ուսանողները սովորել գնահատել ռիսկերը բիզնես սկսելիս, ֆինանսավորման գաղափարներ, ինչպիսին դրամահավաքն է (բրաուդֆանդինգ),

տրամադրելու խորհուրդներ բիզնես պլան և մարքեթինգային պլան կազմելու վերաբերյալ:

Ներկայացումներն ուղեկցվեցին հարցուպատասխանով, գործընկերների կարծիքներով և ինքնագնահատմամբ: Բոլոր մասնակիցները ոգևորությամբ էին արտահայտում մատուցված նյութի անհրաժեշտության և արդյունավետության վերաբերյալ: Ոգեշնչող էր այն, թե ինչպես են համախմբվում և զարգացնում իրենց ձեռնարկատիրական հմտությունները տարբեր մշակութային և կրթական միջավայրերի ուսանողները:

SMARTI ծրագրի հանրահռչակում՝ ՇՊՀ-ում

Մայիսի 29-ին Շիրակի պետական համալսարանում (ՇՊՀ) տեղի ունեցավ 2023-2024 ուստարվա ընթացքում **Էրազմուս+** ծրագրին մասնակցած աշխատակիցների և ուսանողների հանրային հաշվետվությունը:

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ի՝ շարժունության ու վերապատրաստման մասնակցած ուսանողներն ու դասախոսները (Հեղինե Իսահակյան, Արտակ Հովհաննիսյան, Մարիամ Հարությունյան, Գայանե Հարությունյան, Մարինե Գրիգորյան, Անի Սահակյան, Վեներա Զաքարյան) սահիկաշարերի միջոցով ներկայացրին Ռումինիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Ավստրիայի և Լատվիայի գործընկեր համալսարաններում իրենց կատարած աշխատանքները:

ՇՊՀ արտաքին համագործակցության կապերի կենտրոնի տնօրեն Հովիկ Մելքոնյանը համառոտ ներկայացրեց SMARTI ծրագրի ընթացիկ վիճակը:

SMARTI ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկում՝ ՀՀ ՊԿԱ-ում

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում (ՀՀ ՊԿԱ) փետրվարի 26-ին ավարտվեց SMARTI ծրագրի պիլոտային երկրորդ դասընթացը, որին մասնակիցները երեք անգամ հնարավորություն ունեցան ունկնդրելու դասընթացավարներ Լուսինե Գրիգորյանին և Վիլեն Խաչատրյանին: Վերջին՝ երրորդ հանդիպմանը ՀՀ ՊԿԱ միջազգային համագործակցության և զարգացման կենտրոնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանն ամփոփեց նախորդ հանդիպումների աշխատանքը՝ հիշեցնելով վերլուծական մտածողության և իրավիճակային խնդիրներում դրա կիրառության մասին: «Անգլերենով դասավանդման բանավոր հմտություններ» մոդուլի շրջանակում նրա վերջին բանախոսությունը վերաբերում էր ֆենոմենական մտածողությանը և գրավոր խոսքում դրա զարգացման անհրաժեշտությանը: Մասնակիցներին առաջադրված իրավիճակային խնդիրն այս անգամ վերաբերում էր հանդուրժողականությանը (մասնավորապես՝ կրոնական), և երկու խմբի բաժանված ունկնդիրները փորձում էին անգլերենով հիմնավորել հարցի վերաբերյալ միմյանցից տարբերվող մոտեցումները:

Մասնակիցների ոգևորությունը շարունակվեց նաև հաջորդ դասընթացավարի՝ ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ Վ. Խաչատրյանի՝ արհեստական բանականությանը վերաբերող բանախոսության ժամանակ, որին հաջորդեց արհեստական բանականության դրական և բացասական կողմերի մասին քննարկումը: Երկու խմբերի ներկայացրած փաստարկներն էլ բավական համոզիչ էին, ուստի ներկաները եկան այն եզրահանգման, որ միայն ժամանակը կարող է տալ «Ինչպիսի՞» ազդեցություն է ունենալու արհեստական բանականությունը մարդկության վրա» գլխավոր հարցի պատասխանը:

Դասընթացի ավարտին ՀՀ ՊԿԱ ռեկտոր Խաչատուր Ղազեյանը նախ շնորհակալություն հայտնեց ծրագրի կազմակերպիչներին, աջակիցներին և մասնակիցներին, ապա վստահեցրեց, որ հեռու չէ այն օրը, երբ ակադեմիայում ուսուցանվող առարկաների շարքում ծրագրի շնորհիվ կներդրվեն երկու լեզվով (հայերեն և անգլերեն) դասավանդվող առարկաներ: Խ. Ղազեյանը շնորհավորեց ունկնդիրներին նման հետաքրքիր դասընթացի մասնակիցը լինելու համար՝ հանձնելով նրանց մասնակցության վկայականներ:

ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկում՝ ՀԱԱՀ-ում

2024 թ. փետրվարի 2-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (ՀԱԱՀ) մեկնարկեց SMARTI ծրագրի շրջանակում իրականացվող երկրորդ պիլոտային դասընթացը: Մի քանի օր անց՝ փետրվարի 16-ին ՀԱԱՀ-ը հյուրընկալեց Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանի (SMARTI նախագծի գործընկեր) ներկայացուցիչներ Ամանդա Մասոնին և Քեյսի Բոմոնտին դասընթացի արտաքին գնահատում անցկացնելու համար:

SMARTI ծրագրի համակարգող, հետազոտող-դասավանդող Լիանա Վարդանյանը «ԱԴՄ մոտեցմամբ բանավոր դասավանդման հմտություններ» թեմայով դասընթացի ընթացքում մասնակիցներին անգլերենով ներկայացրեց դասավանդման մի շարք մեթոդների, դրանց շնորհիվ ուսանողների տրամաբանությունը զարգացնելու և դասերին ներգրավելու հետաքրքիր լուծումների մասին: Դասընթացն անցավ շատ ջերմ ու ակտիվ մթնոլորտում:

Ճշգրիտ գյուղատնտեսության մասնագետ Սերյոժա Կարապետյանը «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար» մոդուլի շրջանակում գործընկերներին ներկայացրեց ճշգրիտ գյուղատնտեսության ոլորտում կիրառվող նորագույն տեխնոլոգիաների և դրանց արդյունավետության մասին:

Երկու դասընթացավարներն էլ մասնակիցների հետ ծավալեցին ակտիվ ու հետաքրքիր քննարկում: Ձևավորելով մի քանի խմբեր՝ նրանք տեղում կիրառեցին դասի շրջանակում առաջարկված մեթոդները: Այդ ամենին զուգահեռ տեղի ունեցավ դասընթացավարների գնահատում: Ավարտին SMARTI ծրագրի գործընկեր Քեյսի Բոմոնտն իր հիացմունքը հայտնեց ՀԱԱՀ գործընկերներին:

ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկում՝ ՇՊՀ-ում

Փետրվարի 15-ին Շիրակի պետական համալսարանում (ՇՊՀ) տեղի ունեցավ «ԱԴՄ որակի ապահովում» և «ԱԴՄ հետազոտական աշխատանք գրելու հմտություններ» կրթական մոդուլների փորձարկման երկրորդ դասընթացը, որն անցկացրին **Էրազմուս+** SMARTI ծրագրի ՇՊՀ համակարգող Հովիկ Մելքոնյանը, օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս Հասմիկ Մատիկյանը և մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի դասախոս Կարլեն Մանուկյանը:

ՇՊՀ-ի նորաբաց **ԱԴՄ** կենտրոնում ռեկտոր Երվանդ Սերոբյանը ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին՝ առանձնակի արժևորելով SMARTI ծրագրի դերը և անհրաժեշտությունը համալսարանի համար՝ մաղթելով արդյունավետ աշխատանքային ընթացք: Նա շնորհավորեց և հավաստագրեր հանձնեց ՇՊՀ ներկայացուցիչներին՝ պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ Արտակ Հովհաննիսյանին, Թարգմանչական գործ (անգլերեն-հայերեն) մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհիներ Անի Աթոյանին, Մարիանա Հարությունյանին և Անդա Վարդանյանին, Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի անցկացրած COIL միջոցառմանը մասնակցելու համար:

Մինչ դասընթացի մեկնարկը SMARTI ծրագրի արտաքին փորձագետները՝ Լիվերպուլի գործընկեր համալսարանի դասախոսներ Ամանդա Մեյսոնը և Քեյսի Բիմոնթը, աշխատանքային հանդիպում ունեցան ՇՊՀ-ի ռեկտոր Երվանդ Սերոբյանի, Որակի ապահովման բաժնի պետ

Գայանե Ավետիսյանի և արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն Հովիկ Մելքոնյանի հետ: Նրանք քննարկեցին ծրագրի շրջանակներում իրականացված և առաջիկայում նախատեսվող աշխատանքներին առնչվող հարցեր:

Մայիսի 29-ին ՇՊՀ-ի նիստերի դահլիճում բուհի ռեկտոր Ե. Սերոբյանը հանդիսավոր արարողությամբ վկայականներ հանձնեց մոդուլների պիլոտային դասընթացները հաջողությամբ հաղթահարած մասնակիցներին: Ռեկտորն իր ողջույնի և շնորհավորանքի խոսքում նշեց, որ շատ կարևոր է փոխանակման ծրագրերին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությունն ու ձեռք բերած փորձը հանրային հաշվետվությունների միջոցով գործընկերներին փոխանցելը:

Նա հույս հայտնեց, որ Օտար լեզուների ուսուցման կենտրոնի գործարկմամբ բուհը Էրազմուս+ ծրագրին մասնակցության առավել մեծ աշխարհագրություն կունենա:

ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկում՝ ՎՊՀ-ում

Ս/թ փետրվարի 14-ին Վանաձորի պետական համալսարանում (ՎՊՀ) տեղի ունեցավ **Էրազմուս+** ծրագրի երկրորդ պիլոտային դասընթացը՝ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար:

Մինչև դասընթացի սկսվելը ՎՊՀ ռեկտոր Ռուստամ Սահակյանը հանդիպում ունեցավ SMARTI նախագծի արտաքին փորձագետներ, Լիվերպուլի գործընկեր համալսարանի աշխատակիցներ Ամանդա Մեյսոնի և Քեյսի Բոմոնտի, ինչպես նաև նախագծի տեղական համակարգող Լուսիկ Վարդանյանի հետ: Նրանք քննարկեցին նախագծի շրջանակում իրականացված և առաջիկայում նախատեսվող աշխատանքներին առնչվող հարցեր: Դասընթացն անցկացնող դասախոսներն էին ՎՊՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Արինե Դանիելյանը, էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնի դասախոս, տ.գ.թ. Արմինե Գևորգյանը, օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Գոհար Դոխոլյանը և մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի ասիստենտ, տեխ.գ.թ. Նունե Խուբլարյանը, որոնք դասերը մշակել և բարելավել էին ԱԴՄ հետևյալ երկու մոդուլների առաջին պիլոտի գնահատման արդյունքների հիման վրա.

Մոդուլ 1. Հաղորդակցական մոտեցում. ուսանողակենտրոն եւ խառը (ՏՀՏ-ի կիրառմամբ) կամ էլեկտրոնային կրթության ռազմավարություններ,
Մոդուլ 7. ԱԴՄ ուսանողների գնահատման ռազմավարություն (ֆորմալ և այլընտրանքային գնահատում):

Ա. Դանիելյանը ներկայացրեց առաջին մոդուլի տեսական մասը՝ «Ուսանողակենտրոն ուսուցում և կառուցողական ուսուցման տեսություն, նախագծային ուսուցում (հետազոտության վրա հիմնված ուսուցում), շրջված լսարան»: Արմինե Գևորգյանը անցկացրեց «Գովազդը ռեստորանային գործարարության մեջ» թեմայով գործնական աշխատանք՝ կիրառելով «Շրջված դասարան» մեթոդը:

Մյուս մոդուլի շրջանակում «Ձևավորող, միավորային, խառնուսուցման գնահատման տեխնիկա և ռազմավարություն» վերնագրով դասը ներկայացրին Գ. Դոխոլյանը և Ն. Խուբլարյանը: Գ. Դոխոլյանն անդրադարձավ ձևավորող, միավորային և խառնուսուցման գնահատման տեսական հայեցակետերին՝ խոսելով գնահատման այդ ձևերի առավելություններն ու թերությունները: Դասի ընթացքում Ն. Խուբլարյանը և Գ. Դոխոլյանը ներկայացրին ձևավորող և ամփոփիչ գնահատման համար ՏՀՏ արդյունավետ և նորարարական գործիքներ:



Միջոցառման ավարտին ԵՄ ներկայացուցիչներն իրենց գոհունակությունը հայտնեցին ՎՊՀ-ի՝ մինչև այժմ իրականացրած աշխատանքի վերաբերյալ և խրախուսեցին շարունակել ծրագրված աշխատանքները:

ԱԴՄ մոդուլների 2-րդ փորձարկում՝ ԳՊՀ-ում

2024 թ. փետրվար-մարտ ամիսներին Գորիսի պետական համալսարանի ԱԴՄ կենտրոնում SMART ծրագրի շրջանակներում անցկացվեց «Նախամոդուլային ուսումնական պլանի մշակում և կառուցվածքային ձևավորում (Եվրոպական կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգի (ԿՓԵՀ), ԵՄ թյունինգի և ԵՄ թյունինգային շրջանակի վերաբերյալ վերապատրաստում)» և «ԱԴՄ մոդուլի ուսումնական պլանի մշակում և ուսուցման ձևավորում» մոդուլների 2-րդ փորձարկումը: Դասընթացին մասնակցում էին ակադեմիական անձնակազմի 32 ներկայացուցիչներ և ուսանողներ: Գործընթացին հետևում էին Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանի SMARTI ծրագրի երկու փորձագետներ Ամանդա Մեյսոնը և Քեյսի Բոմոնտը, ինչպես նաև ՈԱԱԿ-ի ներկայացուցիչները:

Դասընթացը վարում էին արտաքին կապերի, համագործակցության և լրատվության բաժնի վարիչ, SMARTI ծրագրի տեղական համակարգող Նաիրա Սաֆարյանը, բնագիտական և ինժեներատնտեսագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Լիլիթ Աթաբեկյանը (ծրագրի աշխատակից) և օտար լեզուների ամբիոնի դասախոս Նաիրա Մեժլումյանը (ծրագրի աշխատակից):

Դասընթացի առանցքում հետևյալ թեմաներն էին.

- ուսումնական պլանի ձևավորման ավանդական մոդելներ,
- հետադարձ (backward), խառը, հիբրիդային և առցանց ծրագրերի ու դասընթացների նկարագրություններ:

Դասերն անցնում էին ինտերակտիվ մթնոլորտում: Դրան նպաստում էին հարցուպատասխանները, մասնակիցներին հանձված թերթոնները, որոնք պարունակում էին նաև առաջադրանքներ: Յուրաքանչյուր դասի ավարտին մասնակիցները լրացնում էին առցանց հարցում գործընթացի գնահատման համար:

Դասընթացը հաջողությամբ ավարտվեց ապրիլի 18-ին: ԳՊՀ ռեկտոր Տիգրան Վանդունցը շնորհակալություն հայտնեց դասընթացավարներին, շնորհավորեց մասնակիցներին՝ հանձնելով նրանց հավաստագրեր՝ հաստատված ԳՊՀ-ի ռեկտորի և SMARTI ծրագրի տեղական համակարգողի կողմից: Նաիրա Սաֆարյանը հույս հայտնեց, որ նմանօրինակ դասընթացները շարունակական բնույթ կունենան և ավելի մեծ ներգրավվածություն կլինի:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԱԴՄ կենտրոնների և մոդուլների արտաքին գնահատում



SMARTI ծրագրի շրջանակներում ՀՀ գործընկեր համալսարաններում ստեղծված ԱԴՄ կենտրոնները և բուհերի մշակած ու փորձարկված մոդուլները գործընկերային արտաքին գնահատում են անցել: Այդ նպատակով փորձագետները մարտի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում առցանց հանդիպում-քննարկումներ են ունեցել բուհերի ռեկտորների, SMARTI ծրագրի և ԱԴՄ կենտրոնների համակարգողների, դասավանդող անձնակազմի, վերապատրաստված մասնակիցների հետ: Արտաքին գնահատման գործընթացը համակարգել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ):

ԱԴՄ կենտրոնները սահմանված ձևաչափով իրենց գործունեության և փորձարկված երկու անգլալեզու մոդուլների ինքնավերլուծություն ու SWOT վերլուծություն են իրականացրել, ապա ներկայացրել փորձագիտական խմբին:

Արտաքին գնահատման ընթացքում փորձագետների ուշադրության կենտրոնում են եղել՝

- ԱԴՄ կենտրոնի դերը՝ բուհի առաքելության իրականացման գործընթացում,
- ԱԴՄ կենտրոնի տեղը՝ բուհի կազմակերպական կառուցվածքում, մյուս ստորաբաժանումների հետ համագործակցության շրջանակը և մեխանիզմները,
- ԱԴՄ կենտրոնի դերը՝ բուհի գրավչության մեծացման և օտարերկրյա ուսանողների ներգրավման գործում,
- գործատուների հետ համագործակցությունը՝ ԱԴՄ կենտրոնի հետագա զարգացման և անգլալեզու նոր մոդուլների ներդրման նպատակով, անգլալեզու մոդուլների ներդրման բաղադրությունը և մասնագիտական ուղղությունների ընտրությունը,
- անգլալեզու մոդուլների դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդաբանությունը և գործիքները, դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմները,
- SMARTI ծրագրի ավարտից հետո ԱԴՄ կենտրոնի գործունեության շարունակականության և արդյունքների կայունության ապահովման ուղիները,
- սահմանված վերջնարդյունքների ձևաչափման և դասավանդվող մոդուլների որակի ապահովման մեխանիզմները,
- շահակիցների հետ հետադարձ կապը և դրա հիման վրա իրականացվող բարելավման գործիքակազմը և բաղադրությունը:

Արտաքին գնահատման արդյունքները ամփոփվել են փորձագիտական զեկույցներում, որոնցում նշվել են ԱԴՄ կենտրոնների և դասավանդվող մոդուլների ուժեղ ու թույլ կողմերը, արձանագրված խնդիրների բարելավման ուղղությամբ խորհրդատվությունները՝ շեշտադրելով ԱԴՄ կենտրոնների գործունեության և բուհի ռազմավարական կառավարման փոխկապակցվածությունը, ինչպես նաև կենտրոնի գործունեության կայունության ապահովումը:

Փորձագիտական խորհրդատվությունների հիման վրա ԱԴՄ կենտրոններն առաջիկայում կպատրաստեն բարելավման ծրագրեր:

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

SMARTI ծրագրի ազգային տեղեկատվական օր և դասընթաց

2024 թ. հուլիսի 29-ից օգոստոսի 2-ը կանցկացվի «SMARTI ծրագրի ազգային իրազեկման օր և վերապատրաստում» միջոցառումը: Այս մեկշաբաթյա իրադարձությունը կներառի դասախոսություններ, կարողությունների զարգացման դասընթացներ, որոնց մի մասը կիրականացվի առցանց, մյուս մասը՝ առկա ձևաչափով:

Միջոցառումը կմեկնարկի հուլիսի 29-ին ՀՀ ՊԿԱ-ում: Ազգային իրազեկման օրվան նվիրված միջոցառումներին կհաջորդեն դասընթացները՝ նվիրված դասավանդման առաջադեմ ռազմավարություններին, տեխնոլոգիաների ներառմանը և անգլերենն ակադեմիական նպատակներով օգտագործելուն: Դասընթացները կվարեն Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանի մասնագետները, որոնք կտրամադրեն համապարփակ գիտելիքներ և օգտակար ռեսուրսներ:

Օգոստոսի 1-ին և 2-ին միջոցառումը կշարունակվի ՎՊՀ-ում: Իրազեկման գործողություններին զուգահեռ կիրականացվեն վերապատրաստման դասընթաց-ներ հիմնականում իրավիճակահեն ուսուցման եղանակով: Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանի և Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի մասնագետների դասավանդմամբ մասնակիցները կտիրապետեն այն գործիքներին, որոնք անհրաժեշտ են ԱԴՄ մեթոդոլոգիայով ուսուցման գործընթացը կազմակերպելու համար:

Ծրագրի եզրափակիչ հանդիպումը՝ ՀԱԱՀ-ում

2024թ. նոյեմբերի 26-29-ը ՀԱԱՀ-ը կհյուրընկալի SMARTI ծրագրի եզրափակիչ համաժողովը, որի ընթացքում կներկայացվեն ծրագրի հաջողություններն ու ազդեցությունները՝ ուղղված Հայաստանում բարձրագույն կրթության զարգացմանը, կտարածվեն ծրագրի արդյունքում ձեռքբերված մանկավարժական ԱԴՄ լավագույն փորձը և անգլերենի ուսուցման նորագույն ռազմավարությունները, հնարներն ու ռեսուրսները:

Բոլոր նրանց համար, որոնք մտահոգ են Հայաստանում բարձրագույն կրթության ապագայով, սա հրաշալի իրադարձություն է:

SMARTI ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ

Coordinator

TECHNISCHE UNIVERSITÄT DRESDEN

Partners

RIGA TECHNICAL UNIVERSITY

LIVERPOOL JOHN MOORES UNIVERSITY

CATOLICA FACULTY OF BIOTECHNOLOGY PORTO

NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION